

Միրասուն օրիորդները կամ տիկիներն երբ տուն մը այցելութեան երթան՝ սանդուխին երկրորդ աստիճանէն կերկնցնեն իրենց ոտներն եւ սպասաւորներու քաշել կու տան իրենց կօշիկներն, որպէս զի պզտիկ ոտներն ամենուն ցոյց տան. իսկ երբ ոտները մեծ ըլլան՝ սպասաւորներուն քաշել կու տան իրենց ձեռնոցները. շատ մը կիներ ալ իրաւամբ քաշել տուած են իրենց ակոսները, որովհետեւ մեծ էին անոնք եւ մեծ ցաւ կ'ապտճառէին... գեղեցկութեան:

Տիկիներէն ոմանք կոմսուհիներու կամ մարքիզուհիներու նմանելու համար ամեն հնարք ի գործ կ'դնեն: Երբ զաւակ մը բերեն աշխարհ՝ իսկոյն ստնտուի մը կ'յանձնեն զայն, վասն զի ազնուականութեան դէմ է, որ կին մը իւր զաւակին կաթ տայ: Արդեօք պիտի գա՞յ այն օրն, ուր սպասուհիներն բերեն իրենց տիկիներուն բերելիք զաւակներն ալ, որպէս զի փափկասուն տիկիներն ծննդաբերութեան ծանր գործէն ալ խալսին...:

Միջագիւղցին ուրիշ թաղեցիներու բաղդատմամբ աւելի քաղաքավար է: Խնդում երես ունի. եթէ երբեմն տխուր տեսնես զինք՝ պատճառն թաղին ազգային վարժարանն է:

Գիւղիս կլիմայն չէզոք է. ո՛չ բարիք կը գործէ եւ ո՛չ չարիք. բնակիչներն ալ իրենց կլիմային պէս են:

Կան երիտասարդներ, որ ինքզինքնին միշտ բարձր դրից մէջ կգտնեն. եթէ ասոր պատճառը փնտռուի՝ դիւրին է համոզուիլ, որ այդ երիտասարդներն այդչափ բարձր չը պիտի կարծէին զիրենք՝ եթէ օդէն աւելի թեթեւ չըլլային: Դժբախտաբար մեր ազգին մէջ շատերու բարձրանալուն գաղտնիքը բնական օրէնքով միայն կ'լուծուի: Ծանրերը միշտ գետնաքարշ կմնան եւ թեթեւները վեր կ'ելնեն: Այս գիւղին մէջ կան երիտասարդներ՝ որոց զլուխն եթէ չուան մը անցունենք՝ կրնանք զանոնք թռուցիկի պէս բարձրացունել... օդին մէջ:

Աւելորդապաշտութիւն չկայ այս գիւղին մէջ. (ոսկին այս հաշուէն դուրս է). մանաւանդ թէ պակասապաշտութիւն կ'տիրէ հոս: Ամենէն աւելի պաշտուող կուռքը նորաձեւութիւնն է:

Զբօսանքը շատ կսիրեն հոս. եթէ տան մը մէջ պարն սկսի՝ առ նուազն վեց օրէն կը վերջանայ. իսկ երբ ազգային խնդրոյ մը վրայ խօսք բացուի՝ կէս ժամէն աւել չտեսեր:

Ներքին բերքն է – ելակ եւ բամբասանք: Ելակն ամեն տարի առատ չըլլար. իսկ բամբասանքն, որ շատ անձրեւէն կամ շատ երաշտութենէն